# ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 հոկտեմբերի 2008 թ. N 691

ք. Ստեփանակերտ

## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ՀԱՏԿԱՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԶԵՆՔԻ ՏԵՍԱԿԸ, ՁԵՎԸ, ՄՈԴԵԼԸ ԵՎ ՔԱՆԱԿԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԶԵՆՔ ԿՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Զենքի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ կետի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Բնապահպանական վերահսկողության մասին» օրենքի 17-րդ հոդվածի դրույթները՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը *որոշում է.*

Սահմանել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության համակարգում աշխատողներին հատկացվող ծառայողական զենքի տեսակը, ձևը, մոդելը և քանակը, ինչպես նաև զենք կրելու իրավունք ունեցող պաշտոնների անվանացանկը՝ համաձայն հավելվածի:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Bnak resursin zenq-3

Հավելված
ԼՂՀ կառավարության
200 թ. __________ ____-ի

թիվ _______ որոշման

# ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԶԵՆՔ ԿՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ

| ՀՀ | Զենք կրելու իրավունք ունեցող պաշտոնների անվանացանկը | Զենքի տեսակը | Ձևը | Մոդելը | Քանակը |
|---|---|---|---|---|---|
| 1. | Վարչության պետ | ծառայողական | կարճ ակոսափող | ոստիկանության քրեագիտական պահանջներին համապատասխան տեխնիկական բնութագիր ունեցող «Բայկալ» մակնիշի ատրճանակ | 1 |
| 2. | Բնապահպանական գլխավոր պետական տեսուչ | ծառայողական | կարճ ակոսափող | ոստիկանության քրեագիտական պահանջներին համապատասխան տեխնիկական բնութագիր ունեցող «Բայկալ» մակնիշի ատրճանակ | 1 |
| 3. | Բնապահպանական ավագ պետական տեսուչ | ծառայողական | կարճ ակոսափող | ոստիկանության քրեագիտական պահանջներին համապատասխան տեխնիկական բնութագիր ունեցող «Բայկալ» մակնիշի ատրճանակ | 1 |
| 4. | Բնապահպանական պետական տեսուչ | ծառայողական | կարճ ակոսափող | ոստիկանության քրեագիտական պահանջներին համապատասխան տեխնիկական բնութագիր ունեցող «Բայկալ» մակնիշի ատրճանակ | 11 |
| | **Ընդամենը** | | | | **14** |

ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ